ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 105.8%, 2020թ. հունվար-դեկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 92.5%, իսկ 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 2 տրլ 385 մլրդ 909.7 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 315 մլրդ 623.2 մլն. և 281 մլրդ. 996 մլն դրամով:

Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 933 մլրդ 2 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 113 մլրդ 690.1 մլն. և 80 մլրդ. 213.1 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 470 մլրդ 79 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 56 մլրդ 248.1 մլն. և 35 մլրդ. 477 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 3 տրիլիոն 390 մլրդ 983.2 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 532 մլրդ 925.4 մլն և 141 մլրդ 762.7 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1 տրլ 879 մլրդ 261.1 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 170 մլրդ 810.3 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 183 մլրդ 111.7 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.1%-ի և 109.0%-ի պարագայում:

Գյուղատնտեսության արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 98.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.4%-ի և 95.8%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 90.5%-ի և 104.6%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.0%-ի և 108.9%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 85.3%-ի և 115.0%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 587 մլրդ 924.4 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 184 մլրդ 828.8 մլն և 231 մլրդ 616.4 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 1 տրիլիոն 495 մլրդ 785.1 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 107 մլրդ 861.4 և 27 մլրդ 63.1 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 279 մլրդ 219.2 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 21 մլրդ 376.1 մլն և 25 մլրդ 241.4 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 22 մլրդ 981 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1 մլրդ 556.9 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ 924.9 մլն դրամով:

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 99.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.6%-ի և 123.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.1%-ի և 107.6%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 109.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.1%-ի և 100%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.1%-ի և 96.9%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ



Աշխատանք փնտրողներ, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ

Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ



Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 234 մլրդ 232.9 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 105 մլրդ 187.1 մլն և 254 մլրդ 340.6 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 326 մլրդ 846.9 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 36 մլրդ 338 մլն և 54 մլրդ 334.1 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 470 մլրդ 676.3 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 3 մլրդ 174.8 մլն և 29 մլրդ 76.5 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 68.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 80.5%-ի և 122.3%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 112.2%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.1%-ի և 110.7%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 106.2%-ի և 116.5%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.2%, 2020թ. հունվար-դեկտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.2%, 2019թ. հունվար-դեկտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.4%: ՍԳԻ-ն 2021թ. դեկտեմբերին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 107.7%, 2020թ. դեկտեմբերին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 103.7%, 2019թ. դեկտեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 100.7%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 180 մլրդ 373 մլն դրամ, ինչը 122 մլրդ 38 մլն դրամով կամ 11.5%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 112 մլրդ 561 մլն դրամով կամ 10.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. դեկտեմբերի դրությամբ կազմել է 86396 մարդ, ինչը 1603 մարդով կամ 1.8%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1414 մարդով կամ 1.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. դեկտեմբերի դրությամբ կազմել է 57922 մարդ, ինչը 3242 մարդով կամ 5.3%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4083 մարդով կամ 6.6%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 8 մլրդ 379.2 մլն դոլար, ինչը 1 մլրդ 259 մլն դոլարով կամ 17.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 193.1 մլն դոլարով կամ 2.4%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է -2 մլրդ 334.4 մլն. դոլար, ինչը 288.1 մլն դոլարով կամ 14.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 554.6 մլն դոլարով կամ 19.2%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 3 մլրդ 22.4 մլն դոլար, ինչը 485.4 մլն. դոլարով կամ 19.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 373.8 մլն դոլարով կամ 14.1%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5 մլրդ 356.8 մլն դոլար, ինչը 773.6 մլն դոլարով կամ 16.9%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 180.8 մլն դոլարով կամ 3.3%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-դեկտեմբերին նախնական գնահատմամբ կազմել է 204048 դրամ, ինչը 14332 դրամով կամ 7.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 21375 դրամով կամ 11.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



2021թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 303 մլրդ 927.1 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 109 մլրդ 67.9 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 194 մլրդ 859.2 մլն դրամ: 2020թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 333 մլրդ 947 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 359 մլրդ 334.2 մլն դրամ և -25 մլրդ 387.2 մլն դրամ: 2019թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 63 մլրդ 939.4 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -6 մլրդ 643.2 մլն դրամ և 70 մլրդ 582.6 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ